

կամ ուղղակի ուռույց (шишкообразная луковница или шишка) են անուանում: Իրրև օրինակ կարելի է բերել քրքուճի (шафранը զափրան) ուռույցը:

Սոխը (луковница) կորճ ստորերկրեայ ցողուն է ներկայացնում: Վարից արմատներ է արտադրում և սիրուած է լինում հաստ թիքանման տերևներով: Այդ միւսնոյն վերոյիշեալ ուռույցն է միայն աւելի շատ տերևներով: Օրոնք սոխի զլխաւոր զանգուածն են կազմում:

Սոխերը միւսնոյն նպատակին են ծառայում: Ինչպէս և պալարները և տակոխքը: Գլխաւորապէս զանազանուած են նորանով որ տակոխի և պալարների ապագայ աճման կերակրի պաշարը հաւաքուած է ցողունի մէջ: Իսկ սոխի կերակրի մեծ մասը հաւաքուած է տերևների սկզբում: Օրոնք հաստ թիքանման ձև են ստանում մինը միւսին ծածկելով: Օրով հետև ցողունի ծունկերը չեն զարգանում:

Սոխի թիփերը՝ ճշմարիտ որ տերևների սկիզբն են ներկայացնում: այդ բանին համըղուելու համար, բաւական է միայն հետազօտել տերևների վարի մասն մինչև նոցա սկիզբն սոխի մէջ: Բերաքաքանչիւր սոխի տերև իւր դերը կատարելուց յետ թառամում է մինչև հաստ հիմքը: որը թիփի նման մնում է սոխի վերայ:

Մինչև այժմ մենք պատմեցինք ստորերկրեայ ցողունների զանազան ձևերը: ցոյց տալով նոցա տարբերութիւնը և նմանութիւնը: Հողի վերայ զանուած ցողունները ևս տարբեր են լինում:

Քոլոր այդ ձևերի վերայ խօսելն առ այժմ թողնելով, վերցնենք հընդկաթ գենին (кактус) իրրև օրինակ թէ ինչպիսի ձևով կարող է ևս լինել վերերկրեայ ցողունը: Մենք նկատում ենք որ սովորական բոյսերից շատերը, ունին ձգտողութիւն լոյսի ազդեցութեան տակ եղած մակերևոյթը աւելի լայնացնել, իսկ հնդկաթղնուներ հակառակն ենք տեսնում: նորա մակերևոյթը ամենափոքր է: Այդ տեսակ բոյսերը չոր երկրներում յարմարեցած են աճելու համար: այդ պատճառու նոքա չոր երկրներումն են գտանուում:

(Շարունակելէ)

Գ. Տ. Գ.

ՊԱՐՏԻԶՊԱՆ ԵՒ ԳԱՐՈՒՆ

Պարտիզպան.

Ահա եկաւ գարուն՝ վշտերս նորոգուեց,
Վիրաւոր սրտիս մէջ՝ սոխակս յիշուեց,
Գարունը ինձ համար ոչինչ համարուեց.
Ինձ համար չէ՛ այս գարունը, սոխակս թուաւ:

Թռչնոց երամներըն ուրախ երգերով
 Նյացնում աչեր՝ սիրոյ պարերով,
 Քանի որ իմ սիրտս լի է վերքերով՝
 Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ:

Ճռուողուն թռչուններ արգարեւ շատ կան,
 Իսկ ես իմ սրտիս մէջ՝ սիրեցի նորան,
 Գարունը ինձ համար փոխուել է ձմրան,
 Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ:

Ամեն սէր, խնդութիւն՝ ոչինչ է, ունայն.
 Չկայ ինձ բերկրութիւն՝ սրբան եմ միայն.
 Կարուսել եմ սոխակս, չիք նորա նման.
 Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ:

Որոնում եմ հարցնում, ո՞ւր է սոխակս,
 Տասնամեայ կեանքիս մէջ այն էր վաստակս.
 Թէ շուտով չի գտնեմ՝ կանցնի հասակս.
 Ինձ համար չէ այս գարունը, սոխակս թռաւ:

Գարուն.

Ի զուր մ՝ արտասուեր, պարտիզպան՝ ներսէս,
 Թերեւս քիչ օրից՝ նորան կ'տեսնես.
 Յայնժամ լի խնդութեամբ՝ դու պիտի երգես,
 « Ինձ համար է այս գարունը, սոխակս եկաւ »:

Գրաշար՝ Ներսէս Մարտիկոսեան.

Ս. Էջմիածնի գրչութիւն.